

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԱՄԱԿԸ ՎԵՆԵՏԻԿԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՈՒԽՏԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ ՊՈՂՈՍ ՎԱՐԴԱՊԵՏ ԱՆԱՆՅԱՆԻՆ

Ս. Ղազար—Վենետիկ

Գերաշնորհ Աբբահայր,

Քաղցր հուզումով կարդացինք Ձեր 5 ապրիլ 1976 թվակիր հեռագիրը, որով կհաստատեք ստացումը հինգ հազար ամերիկյան դոլլարի, զոր առաքեր էինք Ձեզի Մայր Աթոռիս համեստ միջոցներեն, Մեր մասնակցությունը բերած ըլլալու մտածումով՝ սուրբ Ղազարի ձեր պատմական վանքին վերանորոգության աշխատանքներուն, հրդեհի դժբախտ պատահարեն հետո:

Հրդեհին գույժը ծանր մտահոգություն պատճառեց ոչ միայն Մեզի և Մայր Աթոռիս միաբանության, այլ տագնապեց նաև մեր հայրենաբնակ մտավորականության սրտերը: Հուզումնալի մթնոլորտ մը ստեղծված էր Երևանի մեջ, Մատենադարանեն մինչև գիտությունների ակադեմիա և համալսարան: Բոլորը անխտիր, հարց կու տային մանավանդ՝ ի՞նչ եղան արդյոք՝ ձեռագիրները, Մխիթար Աբբահոր գրադարանը, հնատիպ գիրքերը և արխիվային նյութերը:

Մխիթարական էր տեսնել ու զգալ, մեր մտավորականության, Հայաստանի Ձեր եղբայրներուն սրտցավ ու գուրգուրալից այս վերաբերումը դեպի մեր ժողովուրդի ազգային մշակութային գանձերը որ կգտնվին ձեր բարեխնամ պահպանության ներքո: Եվ անորոշության հուզումնալի օրերեն հետո, երբ նոր ու ճշգրիտ տեղեկություններ հասան, թե փրկված են այդ նշխարները, ինչքան նույնքան հուզիչ եղավ տեսնել ու զգալ ուրախությունը բոլորին, թեև ամենուն ցավ կպատճառեին անշուշտ մայրավանքիդ կրած այլ արժեքավոր կորուստները և նյութական վնասները: Անվարանորեն, ս. Էջմիածնեն և մայր հայրենիքեն կրնանք Ձեզի բերել վկայությունը, թե հրդեհի դժբախտ պատահարը անգամ մը ևս ցույց տվավ հայ մշակույթի արժեքներու նկատմամբ մեր մտավորականության պաշտամունքի հասնող զգացումը և ձեր Ուխտի նկատմամբ մեր ժողովուրդի գնահատանքը:

Այս բոլորով հանդերձ սակայն, Մենք կզգանք թե հրդեհի գիշերը և հաջորդող օրերուն, ի՞նչ տառապալից ու տաժանակիր պահեր անցուցիք Դուք և Ձեր ուխտապահ եղբայրները, և ինչքան լուրջ կորուստներ ու վնաս-

ներ կրեց սուրբ Ղազարը, գուցե ավելի բան երբեք անցյալի մեջ: Խոր ապրումներով կարդացինք մեր սիրելի հայր Ներսես Տեր-Ներսեսյանի հոդվածաշարքը զոր լավ մտածումը ունեցեր էիք հրատարակելու նաև առանձին գրքույկով:

Այժմ որ ավերիչ հողմը անցած է արդեն ձեր վրայեն, Մենք կմաղթենք Ձեզի և ձեր միաբանության՝ անհատնում բարի եռանդ ու անձնազոհ աշխատանք, որպեսզի շուտով, շատ շուտով կարողանաք ամեն ինչ վերանորոգել ու բարեզարդել, որպեսզի ս. Ղազարը «նորոգ զարդարեալ» շարունակե շողալ ու ճառագայթել իբրև հայոց ազգային ոգեկանության հաղթական կամար, Ադրիականի խաղաղ ափերուն, վենետիկյան հրաշալիքներուն կողքին:

Վստահ ենք թե ձեր Ուխտին հատուկ՝ աննկուն կամքով ու եռանդուն աշխատանքով, այլև բարոյական ու նյութական օժանդակությամբը մեր ժողովուրդի հարազատ զավակներուն, Դուք պիտի կարողանաք կենսագործել վերակառուցման ու բարեզարդման առաջադրանքները, մանավանդ իբրև երախտագիտության ու հարգանքի տուրք ձեր Ուխտի հիմնադիր՝ լուսաբնակ Մխիթար Աբբահոր հիշատակին, որուն երեքհարյուրամյա հոբելյանը կպատրաստվիք տոնել:

Այս խոհերով ու մաղթանքներով Մենք արտանց կողջունենք զՁեզ և կաղոթենք որ Աստուծո ողորմությամբ միշտ անսասան ու միշտ շեն ու պայծառ մնա ձեր աղոթքի ու աշխատանքի նվիրական Տունը:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ և խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Ձեզմե բարի լուրեր սպասող և Մեր աղոթքներուն մեջ Ձեզ հիշող, եղբայրական սիրով ի Քրիստոս Փրկիչ մեր՝

ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Մայր Աթոռ ս. Էջմիածին,
21-ը ապրիլի 1976 թ.